Doi: 10.56737/2953-7843-2025.06-101

ՌՈՒԲԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Պատմական գիտ. դոկտոր, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ

ՄԱՐԹԱ ՄԵՋԼՈՒՄՅԱՆ
Չարլզի համալսարան (Պրահա)

ՄԱՐԻԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՀԱԻ

ԿՐՈՆԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ԵՒ ԷԹՆԻԿ ՏԱՐԱԾՔԻ ՆՇԱԳՐՈՒՄԸ (ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՕՐԻՆԱԿՈՎ)[1]

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հանրային եւ ընկերային գործընթացները սփյուռքներում հաճախ ուղղված են ցեղային-ազգային սահմանների հաստատմանը, փոփոխությանը կամ վերաձեւավորմանը, որոնց շրջանակներում ազգությունը շարունակում է մնալ համայնքի կարեւոր ցուցիչ[2]։ Այս համապատկերում, ինչպես շեշտում է Ֆ. Բարտը, անընդհատ երկատվածություն է առաջանում տվյալ խմբի անդամների եւ «օտարների» միջեւ[3]։ Այս տարածքների սահմանները որոշվում են հանրային կապերի ուժգնությամբ, ձեւավորելով ազգացեղային հանգամանքով նշագրված ընկերային ենթակառուցվածք։ Նման ենթակառուցվածքը հիմքում ունի նույնականացման ենթախորքերի համակարգ, որոնք, իրենց հերթին, որոշվում են խմբի ձեւավորման պատմությամբ, դրա կազմով, հանրային եւ տարածական փոփոխությունների շարժընթացով, ընկերային հարաբերությունների կայունությամբ եւ այլ նշանակալի գործոններով։

---

[1]* *Ստացվել է՝ 3.03.2025, գրախոսվել է՝ 1.04.2025։*

Էլ. հասցե՝ harutyunian.mariam96@gmail.com:

[2] *«Նշագրում» հասկացությունը մշակութային այն երեւույթներն է բնորոշում, որոնք ոչ միայն արտահայտում են, այլեւ տարածականորեն ամրագրում են տվյալ միավորի կարեւոր պատմամշակութային արժեք ունեցող իրադարձությունները։ Տես,* Ս. Մանուկյան, *Տարածքային ինքնությունն աշխարհի 25 երկրներում, Օրբելի վերլուծական կենտրոն,* https://orbeli.am/hy/post/1139/2023-05-24։

[3] *Տես* Fr. Barth, Ethnic Groups and Boundaries: The Social Organization of Culture Difference, Oslo, 1969, *էջ 9–10։*

Հայկական սփյուռքի պատմական փորձը հարուստ է օրինակներով, որոնք ցույց են տալիս ազգաբանորեն, ընկերային տեսանկյունից եւ հանրայնորեն նշագրված ազգացեղային տարածքների փոխհարաբերությունը։ Մշակութային ենթակառուցվածքի ստեղծումը, որը նշագրում է հանրային սահմանները, առանցքային դեր է խաղում համայնքը արտաքին միջավայրին ներառվելու գործում՝ միաժամանակ ապահովելով ազգային ինքնության պահպանումը։ Այս համապատկերում, դարերի ընթացքում ձեւավորված ավանդույթները ձեռք են բերում առանձնահատուկ նշանակություն։ Իրենց հերթին, Հայ Առաքելական սուրբ Եկեղեցու ձեւավորած ավանդույթները, մշտապես ունեցել են առանցքային նշանակություն հայ ժողովրդի մշակութային կյանքի կազմակերպման եւ ազգության պահպանման գործում։

Սփյուռքում կրոնական կառույցների նշանակությունն զգալիորեն աճում է, քանի որ դրանք հանդես են գալիս ոչ միայն որպես հոգեւոր, այլ նաեւ հանրային կենտրոններ։ Դրանից ելնելով՝ Հայ Առաքելական Եկեղեցին, հանդես գալով որպես համակարգային կառույց, նպաստում է համայնքներում հայկական ինքնության պահպանմանն ու վերարտադրությանը։ Սփյուռքաբնակների եւ մասնավորապես հայ համայնքների ներկայացուցիչների համար կրոնական կենտրոնների կարեւորությունը դրանց բազմագործառութային դերով է բացատրելի։

Սույն հոդվածի նպատակն է վերլուծել Հայ Առաքելական Եկեղեցու դերը այլազգի միջավայրում ազգային-ցեղային առումով նշագրված հանրային տարածքների ձեւավորման, ինչպես նաեւ սփյուռքի պայմաններում ազգային ինքնության պահպանմանը միտված ընկերային գործելակերպի ձեւավորման եւ զարգացման գործընթացներում։

Նման վերլուծությունը թույլ կտա բացահայտել ժամանակակից սփյուռքյան համայնքներում հանրային տարածքների ձեւավորման եւ ընկերային սահմանների վերափոխման միջոցները, ինչպես նաեւ ընդհանուր առմամբ հասկանալ բազմամշակութային համայնքների զարգացման ուղիները։ Այս առումով, հոդվածի սկզբնական փուլում կարեւոր է հստակ սահմանել եզրաբանական հիմքը, որը ելակետ կհանդիսանա հետագա ուսումնասիրությունների համար։

Հիմնական հասկացություններ։ Այս ուսումնասիրության կենտրոնական հասկացություններից մեկը «ազգացեղային առումով նշագրված տարածք»-ն է, որը թույլ է տալիս հասկանալ ազգային ինքնության ձեւավոր-

ման եւ վերարտադրության գործընթացները սփյուռքյան միջավայրում։ Ազգային պատկանելությունը դիտարկվում է ոչ թե որպես ամրագրված եւ անփոփոխ հատկանիշ, այլ ընթացք, որը ձեւավորվում է հանրային ու խորհրդանշական ազդեցությունների արդյունքում, ինչպիսիք են ամենօրյա փոխգործակցությունը, խորհրդանշական նշագրումը եւ այլն։

Ազգության ժամանակակից մեկնաբանությունները պայմանավորված են ոչ միայն մշակութային գործոններով, այլ նաեւ հիշյալի սահմանների հանրային եւ խորհրդանշական գործառույթներով[4]։ Ըստ հայտնի մշակութաբան Ֆ. Բարտի[5]՝ ազգային խմբերը նկարագրվում են որպես բաց, սակայն կայուն հանրային կազմավորումներ, որոնք պահպանվում են «յուրայինների» եւ «օտարների» տարբերակելու միջոցով։ Այս տրամաբանությամբ «խմբի վերահսկած» կամ խորհրդանշական կերպով նշագրված տարածքը դառնում է նրա հավաքական ինքնության կարեւոր բաղադրիչ։ Շարունակելով Բարտի գաղափարները՝ ժամանակակից արեւմտյան հետազոտողներից շատերը Ագնես Էրոշը եւ Պատրիկ Տատրայը[6], Թերի Քիրբին, Ջոշուա Տաբակը եւ այլք[7] շեշտում են, որ ազգային առումով նշագրված տարածքը ոչ միայն դիտարկելի եւ շոշափելի տարածք է, այլեւ հանրային դաշտ, որտեղ վերարտադրվում են հասարակական կանոնները, մշակութային խորհրդանիշները եւ այլն։

*Առանձնահատուկ նշանակություն ունի նաեւ Պ. Նորայի մշակած «հիշողության վայրերի» (*lieux de mémoire*) հայեցակարգը[8]։ Սփյուռքում կրոնական կառույցները դառնում են ոչ միայն պատմական հիշողության շտեմարաններ, այլեւ մշակութային պայմանական խորհրդանիշների հաղորդման հարթակներ՝ ձեւավորելով ազգային ինքնության կայուն տարածք։ Եկեղեցին այս համապատկերում ծառայում է որպես հանրային ներառման համակարգ՝ ծեսերի, տոների, կրոնական կյանքի եւ այլ հա-*

---

[4] *Տես* Нат. Бортникова, Сакральное пространство этнокультуры: смысловые доминанты и культурологические подходы, Человек культура образование Научно-образовательный и методический журнал №1 (15), Сыктывкар, 2015 *էջ 74–83։*

[5] *Տես* Fr. Barth, Ethnic Groups and Boundaries: The Social Organization of Culture Difference, Oslo, 1969, *էջ 9։*

[6] *Տես* Ág. Erőss, Pat. Tátrai, Ethnic features of symbolic appropriation of public space in changing geopolitical frames - The case of Oradea/Nagyvárad, Hungarian Geographical Bulletin 59 (1), 2010, *էջ 56–60։*

[7] *Տես* Te. Kirby, Jo. Tabak, Ma. Ilac, Sa. Cheryan, The Symbolic Value of Ethnic Spaces, , Social Psychological and Personality Science 2020, Vol. 11(7), *էջ 870–873։*

[8] *Տես* Pi. Nora, Les Lieux de Mémoire: La République Relié, 1984, Paris, *էջ 103–108։*

վաքական ձեւերի միջոցով՝ ապահովելով ազգային համայնքի ամբողջականությունը։

Նման ըմբռնումը թույլ է տալիս տարածքը դիտարկել նաեւ որպես հանրային միավոր։ Այս համապատկերում տարածքային ինքնությունը[9] ձեւավորվում է ամենօրյա եւ խորհրդանշական գործողությունների միջոցով, որոնք որոշակի վայր «սեփականը» դարձնելու գործընթացներ են[10]։

Այսպիսով՝ ազգային կրոնական հաստատությունները կատարում են միասնական հիշողության «խարիսխների», մշակույթի հիմնասյան եւ ազգային համախմբվածությունն ապահովող շաղախի դերը։ Հետեւելով Ֆ. Բարտի, Մ. Ֆուկոյի[11] եւ Պ. Նորայի առաջարկած սկզբունքներին՝ կարելի է պնդել, որ ազգային սահմանները չեն սահմանափակվում միայն դիտարկելի-շոշափելի ուրվագծերով, այլ դրսեւորվում են հանրային կապերի հաճախականությամբ եւ խորհրդանշական նշագրումների կայունության միջոցով։ Այս իմաստով՝ եկեղեցին կարելի է դիտարկել որպես ազգային կենտրոնացման (տեղայնացման) վայր՝ յուրահատուկ զատում մշակութային այլությունից։

Համայնքի թվաքանակ, համախմբվածություն կամ մասնատվածություն, ինչպես նաեւ տարբերություններ «հին» եւ «նոր» ներգաղթի ալիքների միջեւ. այս գործոնները՝ թե՛ համալիր, եւ թե՛ առանձին-առանձին, ազդում են ազգային առումով նշագրված տարածքի ձեւավորման գործընթացում Եկեղեցու մասնակցության աստիճանի վրա։ Հաշվի առնելով այս երեւույթների շարժընթացային բնույթը եւ բազմազանությունը, որ պայմանավորված է հստակ իրավիճակներով, բնական է կրոնական տարածքի գործարկման կառուցվածքի ուսումնասիրության եւ հետազոտական քննության տվյալներին դիմելու անհրաժեշտությունը։ Ներկայացված հետազոտության շրջանակում մենք դիտարկում ենք այդ տարածքը երեք վերլուծական ուղղությունների միջոցով՝

ա) հայ համայնքների եւ դրանց կրոնական ենթակառուցվածքի պատմափուլային ձեւավորումը,

---

[9] *Տե՛ս* Ar. Appadurai, Modernity at Large: Cultural Dimensions of Globalization, University Of Minnesota Presspublic, Vol. 1, London, *1996, էջ 182–188։*

[10] *Տե՛ս* Ed. Soja, Thirdspace: Journeys to Los Angeles and Other Real-and-Imagined Places, Cambridge, 1996, *էջ 186–136,* He. Lefebvre, The Production of Space, transl. by Nicholson-Smith, Oxford, Victoria, 1991, *էջ 39–44։*

[11] *Տե՛ս* Лю. Баева, Культурная гетеротопия: типология и признаки, Ценности и смыслы, №2 (48), 2017, *էջ 6–10։*

բ) տվյալ համայնքի եւ արտաքին ընկերային-մշակութային միջավայրի փոխազդեցությունը,

գ) սփյուռքյան միջավայրում ազգային ինքնության եւ կրոնական սովորույթների կայուն պահպանումը։

Վերլուծական եզրակացությունները հիմնված են համակցված եղանակի սկզբունքներին, որոնք միավորում են որակական խորքային հարցազրույցներ եւ քանակական ձեւայնացված հարցումներ։ Այս կերպը թույլ է տալիս ապահովել վերլուծական տվյալների ներկայացուցչականությունը։

ԵՂԱՆԱԿՆԵՐ

Հետազոտությունն իրականացվել է «Հարազատ եւ այլազգի միջավայրում հայերի համեմատական հետազոտության հիմնական ուղղությունները. ուսումնասիրության խնդիրներն ու հեռանկարները» ծրագրի շրջանակներում։ Հայկական համայնքների էթնիկ տարածքի նշագրման առանձնահատկությունները վերլուծելու համար ընտրվել են երեք համայնքներ՝ Բեյրութ (Լիբանան), Լոս Անջելես (ԱՄՆ) եւ Պրահա (Չեխիա)։ Նշված քաղաքներում դաշտային հետազոտություններն անցկացվել են 2013–2022 թթ. ընկած ժամանակահատվածում։ Համայնքներն ընտրվել են ըստ ազգային նշագրված տարածքի ձեւավորման, գործառման տարբեր փուլերի եւ համակարգային զարգացածության տարբեր աստիճանների։

Վերլուծության ներկայացուցչականությունն ու խորությունն ապահովելու համար օգտագործվել է քանակային ընտրանք, որը հիմնված է փորձագիտական հարցազրույցների ընթացքում ձեռք բերված տվյալների վրա։ Այս մոտեցումը հնարավորություն է ընձեռում ներկայացնել ուսումնասիրվող քաղաքներից յուրաքանչյուրում հայկական համայնքների ընկերային-ժողովրդագրական պատկերը։ Վերլուծվել են այնպիսի ցուցիչներ, ինչպիսիք են սեռատարիքային կազմը, տեղաշարժի ուղիները, կրոնատածության աստիճանը, եկեղեցի այցելելու հաճախականությունը եւ մասնակցությունը համայնքային կյանքին։ Պաշտոնական վիճակագրության բացակայության պայմաններում մեծ դեր են խաղացել ներառված տեղեկատու անձանց եւ համայնքային կյանքի գործուն մասնակիցների տրամադրած տվյալները։

Սահմանված ընտրանքը կազմվել է ըստ սեռատարիքային կազմի եւ տեղաշարժի առանձնահատկությունների։ Հարցվողներն ընտրվել են

«ձնագնդիի» եղանակով։ Դաշտային հետազոտություններն իրականացրել են ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ Ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի հետազոտողները՝ տեղական հայկական կազմակերպությունների աջակցությամբ։

Հավաքված տվյալների վերլուծությունը ներառում է վիճակագրական, ինչպես նաեւ համեմատական եւ համադրական հետազոտական նյութերի վերլուծություն։ Սա հնարավորություն տվեց բացահայտելու հետեւյալ կապերը.

ա) Կրոնական վարքագիծ (մասնակցություն պատարագներին, տոներին, ուխտագնացություններին եւ այլն), բ) կրոնի հանդեպ վերաբերմունքի, եկեղեցու ընկալման առանձնահատկությունները ըստ սեռատարիքային բաշխվածության,

գ) տեղաշարժի առանձնահատկությունների եւ կրոնական տարածքի մեջ ներառվածության փոխկապակցվածությունը։

Հատուկ ուշադրություն է դարձված եկեղեցական ենթակառուցվածքի առկայության, բացակայության, կրոնական ներգրավվածության մակարդակի, ազգային տարածքի նշագրման կայունության փոխկապակցվածությունների ուսումնասիրությանը։

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԿՐՈՆԱԿԱՆ ՏԱՐԱԾՔ։ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ։

Բեյրութի հայ համայնքը հայկական ավանդական սփյուռքի դասական օրինակ է։ Այն ձեւավորվել է Հայոց Ցեղասպանությունից հետո՝ Ի. դարի առաջին կեսին։ Բեյրութում գործուն է հայկական 7 եկեղեցի[12], զարգացած է հայկական կրթական համակարգը, ինչպես նաեւ այստեղ է գտնվում Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը, ինչն ընդգծում է տարածաշրջանի հոգեւոր նշանակությունը հայ ինքնության համար[13]։

Պրահայի հայ համայնքը ձեւավորվել է մեծամասամբ վերջին երեք տասնամյակում։ Այն իրենից ներկայացնում է նոր սփյուռքի հայկական համայնքի օրինակ։ Սկզբնական շրջանում ներգաղթը հիմնականում Հայաստանից էր եւ նախկին ԽՍՀՄ հանրապետություններից։ Պրահայի հա-

---

[12] *Առաջնորդարան Հայոց Լիբանանի, Եկեղեցիներ,* https://armprelacylb.org/churches/, *դիտ. 20.07.2025։*

[13] *«Հայ սփյուռք» հանրագիտարան, հտ. 1, 2003, էջ 284–285։*

մայնքը բնութագրվում է ինքանակազմակերպման թույլ կառուցվածքով։ Մինչեւ 2015 թվականը կրոնական արարողակարգերն անցկացվում էին վարձակալված եկեղեցիներում, եւ միայն 2015 թվականին Պրահայի՝ Հայ Առաքելական Եկեղեցու Սուրբ Գրիգոր Լուսավորիչ հայկական համայնքին անժամկետ օգտագործման իրավունքով տրվել է կաթոլիկ Սուրբ Հոգի եկեղեցին[14]։

Լոս Անջելեսի հայ համայնքը միջանկյալ դիրք է զբաղեցնում ավանդական եւ նոր սփյուռքների միջեւ։ Այս համայնքն աչքի է ընկնում տարասեռության բարձր աստիճանով եւ ենթակառուցվածքների մասնակի համակարգայնությամբ։ Լոս Անջելեսում գործում է 8 եկեղեցի[15], ինչը վկայում է կրոնական բարձր գործունության մասին։

Այսպիսով՝ ընտրված երեք դեպքերի ուսումնասիրությունը՝ Բեյրութը, Լոս Անջելեսը եւ Պրահան, ձեւավորում են համապատասխան տիպաբանական եռյակ, որը թույլ է տալիս ուսումնասիրել կրոնական եւ ազգային տարածքների ձեւավորման փուլայնությունը եւ Սփյուռքում հայ համայնքների համակարգային զարգացածության աստիճանը։ Այս երեք համայնքներից յուրաքանչյուրն առանձնանում է որպես հայկական սփյուռքի ուրույն օրինակ՝ արտացոլելով տարբեր մոտեցումներ ազգային եւ կրոնական ինքնության պահպանման հարցում։

Աղ. 1. Բեյրութի, Լոս Անջելեսի եւ Պրահայի հայ բնակչության տեղաշարժի կառուցվածքը (%)

	Պրահա	Լոս Անջելես	Բեյրութ
Ծնվել է տվյալ քաղաքում	*6*	*23*	*86*
Տեղափոխվել է տվյալ քաղաք՝ (ընդհ.)	*94*	*77*	*14*
– Հայաստանի Հանրապետությունից *– Նախկին ԽՍՀՄ երկրներից* *– Այլ երկրներից*	*79* *21* *-*	*54* *26* *20*	*4* *8* *88*

[14] *«Օրեր» շաբաթաթերթ, Հոկտեմբերի 11-ին Չեխիայի հայ համայնքին կտրվի Պրահայի Սուրբ Հոգի եկեղեցին, 7.10.2015,* https://orer.cz/hy/allcategories-hy-am/72-hy-am/1512, *դիտ. 04.06.2025։*

[15] *Տե՛ս* Parishes of The Western Diocese, https://www.wdacna.com/parishes, view. *10.07.2025։*

Տեղափոխման ժամանակահատված՝			
– Մինչեւ 1980 թ.	-	15	47
– 1981–1990 թթ.	-	31	-
– 1991–2000 թթ.	44	27	-
– 2001–2010 թթ.	33	20	21
– 2011 թ-ից հետո	23	7	32

Աղյուսակը ներկայացնում է երեք քաղաքներում բնակվող հայերի ծննդյան վայրի (ծնվել է տվյալ քաղաքում) եւ տեղափոխման (տեղափոխվել է տվյալ քաղաք) պատկերը՝ ներառյալ՝ որտեղից են տեղափոխվել եւ ժամանակահատվածները։

Ըստ հետազոտության արդյունքների Բեյրութի հայերի 86%-ը ծնվել է տվյալ քաղաքում, որը իրենից ներկայացնում է հայկական ավանդական համայնքի օրինակ։ Այն մեծամասամբ ձեւավորվել է երկու հիմնական փուլերով՝ Ի. դարասկզբի Հայոց Ցեղասպանությունից հետո եւ նոր շրջանում՝ Սիրիայից տեղափոխված հայերի վերաբնակեցմամբ։ Ներգաղթածները կազմում են ընդհանուր հայ բնակչության 14%-ը, որից 8%-ը նախկին ԽՍՀՄ-ից, իսկ 4%-ը ՀՀ-ից։ Այլ երկրներից տեղափոխվածների թիվը ամենամեծն է շուրջ 88%։ Ընդհանուր տեղաշարժի ժամանակահատվածը՝ մինչեւ 1980 թ. կազմում է 47%, 1981–2000 թթ. չի արձանագրվում գործուն տեղաշարժ, 2001-ից մինչեւ դաշտային հետազոտության տարեթիվը (2015 թ.)՝ 53%։

Պրահայի հայերի միայն 6%-ն է ծնվել տվյալ քաղաքում, մինչդեռ հիմնական մասն այստեղ է տեղափոխվել Հայաստանի Հանրապետությունից (79%) եւ նախկին ԽՍՀՄ երկրներից (21%)։ Տեղաշարժի հիմնական հոսքը արձանագրվել է 1991 թ.-ից հետո։

Ըստ հետազոտական տվյալների Լոս Անջելեսի հայերի միայն 23%-ն է ծնվել այդ քաղաքում։ Մինչեւ 1990 թ. տեղափոխվածները կազմում են 46%, 1991 թ. հետո մինչեւ դաշտային հետազոտության տարեթիվը (2013 թ.)՝ 54%։

Համեմատական վերլուծությունները, որ հիմնված են ձեւայնացված հարցումների եւ խորքային հարցազրույցների տվյալների վրա, հնարավորություն են տալիս ավելի հստակ ուրվագծել տարբեր երկրներում հայկական համայնքների միջեւ եղած տարբերությունները։ Այս տարբերությունները դրսեւորվում են ոչ միայն կրոնական կացութաձեւի հաճախականության, այլեւ սոցիալական տարածքի կազմավորման, համայնքների

համակարգային զարգացածության աստիճանի եւ ընդունող հասարակության հետ նրանց փոխհարաբերության մեջ։ Որոշ դեպքերում եկեղեցին պահպանում է ներառման հզոր կենտրոնի կարգավիճակը։

Այսպիսով՝ կրոնական կառույցը հանդես է գալիս ոչ միայն որպես մշակութային ավանդույթի վերարտադրության միջոց, այլեւ՝ որպես ազգային կապերի խտության, ինքնակազմակերպման աստիճանի եւ համայնքի ներքին կառուցվածքի կայունության ցուցիչ։ Այստեղից հնարավոր է դառնում կրոնական ներգրավվածությունը դիտարկել որպես առանցքային ցուցիչներից մեկը, որն արտացոլում է ոչ միայն տվյալ անհատի կրոնական ինքնության, այլեւ ընկերային հարմարվողականության եւ սփյուռքի միջավայրում ազգայինի եւ կրոնականի հետ փոխազդեցության աստիճանները։ Երեք համայնքների համադրական հետազոտության արդյունքում կարելի է արձանագրել որոշ միտումներ։

Աղ. 2. Կրոնատածների հարաբերակցությունը ըստ սեռատարիքային բաշխվածության (%)

		Կրոնատածության աստիճան		
Սեռ	Տարիքային խմբեր	Բեյրութ	Պրահա	Լոս Անջելես
Տղամարդիկ	*50 եւ բարձր*	*88*	*64*	*85*
	30–49	*86*	*88*	*74*
	18–29	*88*	*75*	*75*
Կանայք	*50 եւ բարձր*	*96*	*93*	*100*
	30–49	*93*	*90*	*97*
	18–29	*97*	*80*	*82*
Ընդամենը	*50 եւ բարձր*	*93*	*79*	*92*
	30–49	*90*	*89*	*90*
	18–29	*90*	*79*	*77*

Բոլոր երեք համայնքներում արձանագրվում է կրոնական ինքնության բարձր աստիճան, մինչդեռ կանայք եւ ավագ սերնդի ներկայացուցիչները, որպես կանոն, ավելի ընդգծված կրոնատածություն են ցուցաբերում։ Բեյրութը, որն ունի սփյուռքյան երկարատեւ պատմություն եւ զարգացած կրոնական ենթակառուցվածք, բնութագրվում է առավել կա-

յուն ցուցանիշներով։ Լոս Անջելեսում նկատվում է կրոնական ներգրավվածության չափավոր մակարդակ, մինչդեռ Պրահայում այն զգալիորեն ցածր է, հատկապես տղամարդկանց շրջանում, ինչը կարող է կրոնական կայուն ենթակառուցվածքների բացակայության եւ հայկական համայնքի հարաբերականորեն վերջին շրջանում ձեւավորվելու արդյունք լինել։

Աղ. 3. Բեյրութի, Պրահայի եւ Լոս Անջելեսի հայերի շրջանում եկեղեցի հաճախող անձանց մասնաբաժինը՝ ըստ սեռատարիքային կազմի (%)

		Եկեղեցի այցելելու հաճախականություն					
Սեռ	Տարիքային խումբ	Շաբաթը մեկ եւ ավելի անգամ			Ամիսը մեկ եւ ավելի անգամ		
		Բեյրութ	Պրահա	Լոս Անջելես	Բեյրութ	Պրահա	Լոս Անջելես
Տղամարդ	50 եւ բարձր	*6*	*8*	*12*	*56*	*0*	*38*
	30–49	*25*	*20*	*11*	*40*	*0*	*35*
	18–29	*11*	*13*	*11*	*44*	*11*	*37*
Կին	50 եւ բարձր	*42*	*0*	*8*	*33*	*33*	*44*
	30–49	*19*	*25*	*12*	*39*	*10*	*56*
	18–29	*29*	*0*	*22*	*45*	*10*	*23*
Ընդամենը	50 եւ բարձր	*28*	*4*	*10*	*42*	*17*	*41*
	30–49	*22*	*8*	*16*	*39*	*8*	*52*
	18–29	*25*	*8*	*17*	*45*	*16*	*29*

Բեյրութում, ընդհանուր առմամբ, բոլոր տարիքային խմբերի ներկայացուցիչների եկեղեցի այցելության հաճախականությունն ավելի բարձր է, ինչը վկայում է ավանդույթների պահպանման շարունակականության մասին։ Բեյրութում գործում է եկեղեցական ներգրավվածության ավանդական կերպը, Ծեսերի եւ արարողությունների հիմնական մասնակիցները տարեց կանայք են։

Բեյրութի համեմատությամբ Պրահայի հայ համայնքի ներկայացուցիչների եկեղեցի հաճախելու գործակիցը զգալիորեն ցածր է՝ հատկապես 50-ից բարձր տարիքային խմբում։ Պրահայում ներգրավվածության աստիճանը նվազագույնն է, ինչը, հավանաբար, պայմանավորված է եկեղեցու ավելի թույլ համակարգային ներկայացվածությամբ։

Լոս Անջելեսում նկատվում է հաճախելիության միջին գործակից։ Ամենաբարձր ցուցանիշը 50-ից բարձր տարիքային խմբի կանանց խմբում է, որ կազմում է 44%։ Կանայք առհասարակ ցուցաբերում են առավել բարձր ներգրավվածություն, հատկապես ամիսը մեկ եւ ավել անգամ այցելությունների տեսանկյունից՝ գործունությունը տարիքային տարբերակմամբ հավասարակշռված է։

Կրոնական, մասնավորապես եկեղեցական տարածքը, նշանակալի դեր է խաղում հայկական Սփյուռքի կյանքում ինչպես խորհրդանշական, այնպես եւ գործնական մակարդակներում։ Մի կողմից՝ ծեսերին, տոներին եւ հավաքական հիշողությանն ուղղված միջոցառումներին մասնակցության միջոցով ձեւավորվում է ընդհանուր պատմությանը եւ մշակույթին պատկանելու զգացում։ Մյուս կողմից, Եկեղեցին ներկայանում է իբրեւ համայնքի ամենօրյա կենսագործունեության վայր՝ պահպանելով հանրային կապերը, հոգեւոր աջակցությունը՝ հատկապես տեղաշարժի պայմաններում։ Այսպիսով, կրոնաեկեղեցական տարածքը կարող է ընկալվել որպես «յուրային» տարածության մեջ՝ նպաստելով ազգային ինքնության ամրապնդմանը։

Սփյուռքի տարբեր համայնքների կրոնական ներգրավվածության աստիճանի վերլուծությունը թույլ է տալիս բացահայտել դրանում ինչպես կայուն ընդհանրություններ, այնպես եւ փոփոխական տարրեր՝ կախված բնակության երկրի ընկերային-մշակութային հետնախորքից։ Օրինակ՝ Պատարագներին եւ այլ արարողություններին մասնակցելու հաճախականությունը, կրոնական եւ ազգային տոները նշելու ձեւերը, ինչպես նաեւ կրոնական ինքնանույնականացման մակարդակը կարող են էապես տարբերվել՝ կախված համայնքի կառուցվածքից, տեղաշարժի պայմաններից եւ ընդունող հասարակության մեջ ներառման աստիճանից։ Այս չափման ձեւերն իրենց հերթին հանդես են գալիս որպես կրոնի՝ ազգային ինքնության մեջ ներգրավվածության աստիճանի ցուցիչներ եւ հնարավորություն են տալիս հետեւելու, թե ինչպես են ձեւավորվում եւ վերարտադրվում ինքնության ազգային եւ կրոնական բաղադրիչները սփյուռքի պայմաններում։

Աղ. 4. Կրոնական եւ ազգային տոներին մասնակցությունն ըստ սեռատարիքային բաշխվածության (%)

		Կրոնական տոներ			Ազգային տոներ		
Սեռ	Տարիքային խմբեր	Բեյրութ	Պրահա	Լոս Անջելես	Բեյրութ	Պրահա	Լոս Անջելես
Տղամարդ	*50 եւ բարձր*	*59*	*86*	*38*	*41*	*36*	*19*
	30–49	*62*	*50*	*83*	*29*	*100*	*35*
	18–29	*63*	*100*	*29*	*100*	*25*	*4*
Կին	*50 եւ բարձր*	*50*	*64*	*72*	*36*	*29*	*16*
	30–49	*60*	*100*	*67*	*27*	*10*	*10*
	18–29	*60*	*90*	*54*	*27*	*0*	*3*
Ընդամենը	*50 եւ բարձր*	*54*	*75*	*55*	*29*	*32*	*18*
	30–49	*61*	*86*	*71*	*27*	*36*	*17*
	18–29	*60*	*100*	*42*	*36*	*7*	*4*

Բեյրութում կրոնական եւ ազգային տոները, որպես կանոն, կազմակերպվում են եկեղեցու մասնակցությամբ եւ անցկացվում կրոնական տարածքում, ինչը նպաստում է ազգային խորհրդանշական բաղադրիչի ամրապնդմանը։ Լոս Անջելեսում, հատկապես նոր շարժընթացի շրջանում, տոներին մասնակցությունը կատարում է ներառման գործառույթ։ Պրահայում մասնակցության ցուցանիշը ամենացածրն է, ինչը կարող է վկայել համայնքային կյանքում կրոնական բաղադրիչի ավելի թույլ ներկայության մասին։

Կրոնական տարածքը որոշ դեպքերում կարող է ծառայել որպես ազգային ինքնակազմակերպման տարր՝ միաժամանակ կատարելով սահմանների եւ ինքնության նշագրման դեր։ Կայուն կրոնական կենսաձեւի բացակայությունը, ինչպես նկատվում է, օրինակ, Պրահայում, կարող է մեկնաբանվել նաեւ, որպես համայնքի համակարգային ձեւավորման վաղ փուլի բնութագրիչ։ Մյուս կողմից՝ Բեյրութում ներգրավվածության բարձր մակարդակը կարող է վկայել առավել կայուն եւ արմատացած ազգային-կրոնական համակարգի մասին։ Այնուամենայնիվ, նման եզրակացությունները պահանջում են հետագա հստակեցում եւ խոր, համակողմանի վերլուծություն։

Սփյուռքի համայնքների ազգային եւ կրոնական տարածքի վերլուծությունը պահանջում է հաշվի առնել ոչ միայն անհատական կրոնատածության, այլեւ նրա անդամների համակարգային ներգրավվածության աստիճանը։ Ներկայացված տվյալները (տե՛ս աղյուսակ 5) թույլ են տալիս դիտարկել, թե ինքնության ընկալումը, եկեղեցական արարողություններին մասնակցության հաճախականությունը եւ համայնքային կյանքի գործունությունը ինչպես են փոխկապակցված ներկայացված երեք համայնքների դեպքում։ Նման եռակողմ մոտեցումը կարող է նպաստել սփյուռքի հանրային կառուցվածքում կրոնական տարածքի ներառման աստիճանի ավելի խորին ընկալմանը։

Աղ. 5. Կրոնատածության աստիճանի, եկեղեցի այցելության հաճախականության եւ համայնքային կառույցներում ներգրավվածության փոխկապակցվածությունը (%)

Համայնքային կառույցներում ներգրավվածության աստիճանը										
		Ղեկավարներ			Մասնակցում է			Չի մասնակցում		
Եկեղեցի այցելությունների հաճախականությունը	Վերաբերմունքը կրոնին	Պրահա	Լոս Անջելես	Բեյրութ	Պրահա	Լոս Անջելես	Բեյրութ	Պրահա	Լոս Անջելես	Բեյրութ
Հաճախ	Կրոնատած	*9*	*16*	*9*	*61*	*87*	*91*	*30*	*1*	-
	Ոչ կրոնատած	-	-	-	-	*100*	-	-	-	-
Երբեմն	Կրոնատած	*13*	*16*	*17*	*37*	*79*	*77*	*50*	*5*	*6*
	Ոչ կրոնատած	*8*	*24*	*14*	*15*	*76*	*86*	*77*	-	-
Ընդամենը	Կրոնատած	*12*	*16*	*11*	*45*	*81*	*88*	*43*	*3*	*1*
	Ոչ կրոնատած	*8*	*19*	*14*	*15*	*81*	*86*	*77*	-	-

Պրահայի համայնքի վերաբերյալ ստացված արդյունքները ցույց են տալիս հնարավոր անհամապատասխանություն կրոնատածության եւ համայնքային կյանքին գործնական մասնակցության միջեւ։ Պարբերաբար եկեղեցի այցելող կրոնատածների շրջանում համեմատաբար փոքր է ղեկավար դերերում ներգրավվածների տոկոսը, մինչդեռ ոչ կրոնատածներն ընդհանրապես չեն մասնակցում համայնքային կյանքին։ Հաշվի առնելով

համայնքի վերջին շրջանում ձեւավորված լինելը եւ եկեղեցական կայուն ենթակառուցվածք ստեղծելու սահմանափակ հնարավորությունները, այստեղ կրոնական տարածքը, ըստ երեւույթին, կատարում է առավելապես խորհրդանշական կողմնորոշիչի, քան լիարժեք կազմակերպչական հարթակի դեր։

Բեյրութում այլ պատկեր է։ Կրոնական կյանքում գործունությունը, որպես կանոն, սերտորեն կապված է հանրային եւ կազմակերպական կառույցներում մասնակցության հետ։ Եկեղեցի հաճախող կրոնատածների շրջանում համայնքային գործունեության մեջ ներգրավվածների մասնաբաժինը հասնում է 91%-ի, ինչը կարող է վկայել համակարգային զարգացածության բարձր աստիճանը։

Լոս Անջելեսին բնորոշ ձեւանմուշը ցույց է տալիս տարատեսակության զգալի աստիճան։ Չնայած կրոնատածության բարձր աստիճանին՝ համայնքային կյանքին մասնակցության ձեւերը բավական բազմազան են։ Նույնիսկ նրանց շրջանում, ովքեր իրենց չեն համարում կրոնատած, արձանագրվում է որոշակի համակարգային ներգրավվածություն, ինչը կարող է ցույց տալ Եկեղեցու՝ որպես մշակութային եւ հանրային կենտրոնի դերի ընդլայնված ընկալման մասին։ Նման ճկունությունը, ամենայն հավանականությամբ, արտացոլում է տեղաշարժային հոսքերի անդրազգային եւ տարասեռ բնույթը, որը ձեւավորել է տեղի հայկական համայնքը։

Ընդհանուր առմամբ ներկայացված տվյալների վերլուծությունը թույլ է տալիս կրոնական տարածքը դիտարկել ոչ թե որպես կայուն կառուցվածք, այլ՝ որպես շարժուն համակարգ, որը դյուրազգացությամբ արձագանքում է համայնքի ձեւավորման ընթացքին, նրա համակարգային զարգացածությանը եւ հանրային-մշակութային միջավայրին։ Կախված այս գործոններից՝ Եկեղեցին կարող է հանդես գալ որպես խորհրդանշական կողմնորոշիչ, ներառման հարթակ կամ կայուն ազգային եւ կրոնական ենթակառուցվածքների կենտրոն։ Նման մոտեցումը հնարավորություն է ընձեռում համայնքային գործունության առավել ճկուն մեկնաբանության՝ ոչ միայն որպես մշակութային ավանդույթի շարունակություն, այլեւ որպես արձագանք գոյություն ունեցող ընկերային, պատմական եւ տեղաշարժային մարտահրավերներին, ներառյալ՝

- *համայնքային ձեւավորման փուլերը (ավանդական կամ նոր սփյուռք),*

• *շարժընթացային հոսքի բնույթը (հարկադրական կամ կամավոր շարժընթաց),*

• *տարածաշրջանային առանձնահատկությունները*

• *ընդունող հասարակության համապատկերը (դավանանքով մոտ, տարբեր կամ աշխարհիկ հասարակություն)։*

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Իրականացված հետազոտությունը թույլ է տվել ուրվագծել հայկական Սփյուռքի ազգային եւ կրոնական տարածքների բազմաշերտ կառուցվածքը, որի կենտրոնում, որպես կանոն, գտնվում է Հայ Առաքելական սուրբ Եկեղեցին։ Իբրեւ կրոնական, մշակութային եւ հանրային շերտերը միավորող հաստատություն՝ Եկեղեցին կարող է եւ կատարում է ազգային ինքնակազմակերպման կենտրոնի գործառույթ՝ միաժամանակ մնալով ազգային խորհրդանիշ մշակութային այլության պայմաններում։ Առօրյա կացութաձեւի մակարդակում կրոնական վարքագիծը, տոնածիսական գործունությունը պայմաններ են ստեղծում ազգայնորեն նշագրված տարածքի վերարտադրության համար։

Կրոնական տարածքը ներկայացվում է որպես առօրյա կյանքի ներառված մաս, որը համատեղում է կրոնական, կրթական, բարեգործական, մշակութային եւ այլ կենտրոնների գործառույթները։ Նման բազմագործառույթ կերպը թերեւս պայմանավորված է համայնքի պատմության եւ համակարգային կապերի առանձնահատկություններով։

Ուսումնասիրվող երեք համայնքների՝ Բեյրութի, Լոս Անջելեսի եւ Պրահայի գործոնային վերլուծությունը ցույց է տվել, որ համակարգային զարգացվածության աստիճանը, կրոնական եւ ընկերային ներգրավվածությունը սերտորեն կապված են համայնքի ձեւավորման, պատմության եւ ներուժի հետ։ Այնտեղ, որտեղ կրոնական տարածքը բնականորեն ներառված է առօրյա կյանքի մեջ (Բեյրութ), իրականացվում են համալիր գործառույթներ՝ արարողակարգայինից մինչեւ մշակութային, պատմական հիշողության եւ այլն։ Լոս Անջելեսում կազմավորվել է ընդգրկուն միախառնյալ ձեւ, որն ապահովում է ինքնության պահպանումը եւ վերարտադրությունը անդրազգային միջավայրում։ Իսկ Պրահայում գերակշռում է խորհրդանշական կրոնատածության փուլը, որը դեռեւս պահանջում է համակարգային մշակման ընթացք։ Տեսական եւ փորձահեն

նյութերի վերլուծությունը միաժամանակ վկայում են կրոնական տարածքի կարեւորության մասին անգամ նրանց համար, ովքեր իրենց կրոնատած չեն համարում։ Այս համապատկերում Եկեղեցին հանդես է գալիս որպես պատկանելիության խորհրդանշական տարածք՝ հատկապես հասարակության զարգացման անցումային կամ ճգնաժամային փուլերում։

Այսպիսով, սփյուռքում Հայ Առաքելական սուրբ Եկեղեցին կարող է դիտարկվել որպես ազգային-մշակութային տարածություն ստեղծող, պահպանող եւ վերարտադրող կառույց՝ ոչ միայն խորհրդանշական տեսանկյունից, այլեւ կազմակերպչական եւ գործնական մակարդակներում նշագրելով «սեփական» տարածք հայրենիքից դուրս։

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Հայկական սփյուռք, էթնիկ տարածք, կրոնական կառույց, ինքնություն, տեղաշարժ, եկեղեցի, խորհրդանշական սահմաններ։

РЕЗЮМЕ

Статья посвящена анализу роли Армянской Апостольской Церкви в формировании этнически маркированного социального пространства в условиях инонациональной среды. В основе исследования лежат данные стандартизированных интервью с почти 1000 армянами, проживающими в Бейруте, Лос-Анджелесе и Праге, а также 40 глубинных интервью с представителями армянских общин этих городов. Исследуется взаимосвязь между наличием культового сооружения и устойчивостью этнокультурной идентичности в диаспоре. Церковь рассматривается как ключевой элемент символической маркировки пространства, выполняющий функции социальной интеграции и охраны этнической идентичности. Таким образом, сакральное пространство может способствовать трансформации городской среды в символически «свою» территорию, особенно в условиях отсутствия других форм устойчивой инфраструктуры. Такой подход позволяет рассматривать функционирование культового пространства через три аналитических измерения: историко-этапное становление общин, взаимодействие их потребностей с социальным контекстом, а также устойчивость этноконфессиональных практик в условиях миграции.

SUMMARY

This article analyzes the role of the Armenian Apostolic Church in shaping an ethnically marked social space in a foreign environment. The study is based on data from standardized interviews with nearly 1,000 Armenians living in Beirut, Los Angeles, and Prague, as well as 40 in-depth interviews with representatives of the Armenian communities in these cities. The study examines the relationship between the presence of a religious institution and the resilience of ethnocultural identity in the diaspora. The church is viewed as a key element in the symbolic marking of space, performing functions of social integration and the preservation of ethnic identity. Religious space can act as a factor in the transformation of the urban environment, in symbolizing "one's own" space, especially in conditions where other forms of stable social or material infrastructure are absent. This approach enables the analysis of the functioning of religious space through three analytical dimensions: the historical and developmental trajectories of the communities, the interaction of their needs with the surrounding social context, and the sustainability of ethno-confessional practices under conditions of migration.